Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
13.07.2013թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ 4179
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	5	0.1
դիմում	2234	53.4
բողոք	1940	46.1
կրկնակի	376	8.9
կոլեկտիվ	85	2.1

2. Վերցված է վերահսկողության՝ ընդամենը 909

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	663	72.9
բողոք	246	27.0

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	76	1.8
կոմունալ-կենցաղային	51	1.2
շինարարական		
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	6	0.1
բնութ. պահպանութ.		
առևտրի	5	0.1
կենսաթոշակային	76	1.8
առողջապահության	19	0.4
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1428	34.1
օրենսդրական	144	3.4
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	675	16.1
ապարատային		
այլ հարցեր	1691	40.4
սեփականաշնորհում	8	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2013Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 4179 նամակներից մոտ 0.1%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 46.1%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 53.4%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 34.1%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 16.1%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 1.8%-ը առնչվում է բնակարանային, 1.2%-ը կոմունալ-կենցաղային;

Իսկ մնացած՝ մոտ 40.4%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 4000-ին տրվել է գրավոր, իսկ 124-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 55-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն